ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 182-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԵՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՎՍԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Նաիրա Մնացականյանի հետ կնքած 2021 թվականի հուլիսի 19-ի N458 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը և Օվսաննա Վարդանյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նաիրա Մնացականյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2021 թվականի հուլիսի 19-ի N458 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային վերջին օրը համարել 2026 թվականի հուլիսի 20-ը:

2. Օվսաննա Վարդանյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև

օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը: Աշխատանքը սկսել 2026 թվականի հուլիսի 21-ից:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոնի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KHACHATRYAN ARSEN 3902800330

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026 թվական հուլիսի 17

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2026թ. հուլիսի 7-ի
N 112-Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԵՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Գվիտոն Դավթյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ

Անդամներ՝

Հուսիկ Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Աղասի Հովհաննիսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում փորձագետ